

6109

3K111

4-59



2105 JUL 11

25 AUG 200

Վ. ՆԵՎՍՅԱԿ

14 NOV 20

Handwritten signature

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
ՅԵՐՐՈՐԴ ՀԱՄԱԴՈՒՄԱՐԸ



Handwritten number 22022

3KП II
G-59

ՅՔՈՈՈ : 11 JUL 2013
9-59

6109

պր.

ՊԱՏ. № 759 ԳՐԱՌԵՊԳԼԻԿԱԿԱՐ 1468 (Բ)
ՏԻՐԱԺ—2000
ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ 1 ԻՆ ՏՊԱՐԱՆ

599055



ՅԵՐՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

«Կրկնում եմ—զբում եր 1904 թվի ապրիլի 2-ին մենչեիկյան կենտրոնի անդամ Մարտովը նույն կենտրոնի մյուս անդամ Ակսելըրոզին—ինձ թվում է, թե ճակատագիրը մեզ հատկապես այս անգամ առիթ է ներկայացրել: ցույց տալու, թե ունե՞նք մենք արդյոք բարոյական իրավունք «խոսվություն» բարձրացնելու «լենինիզմի» դեմ, թե ավելի լավ կլիներ, յեթե մենք սպասենք...»*)

Այս բաները Մարտովը զբում է մենչեիկյան կենտրոնում առաջացած տարաձայնությունների առթիվ: Այդ կենտրոնը այն ժամանակ բաղկացած էր Մարտովից, Ակսելըրոզից, Դանից, Պոտրեսովից և Տրոցկուց: Յեվ այդ պատճառով, դուրս, այդ խոսքերի մեջ ավելի արժեքավոր է բայչեիզմի վորակումը նույն այն բանով, վորով այժմ բնորոշվում է մի ամբողջ նոր աշխարհայացք (լենինիզմ):

Լենինիզմ—ասա թե ինչի դեմ էյին խոսվություն բարձրացրել մենչեիկները կուսակցության յերկրորդ համագումարում, ասա թե ինչը ավելի վորոշ ձևակերպվեց յերրորդ համագումարում, ինչը հետագայում այնպես փայլուն կերպով հաստատվեց ու արդարացավ ուսուսական առաջին հեղափոխության շրջանում

*) «Ակսելըրոզի և Մարտովի նամակները»: «Նյութեր Ռուսաստանի հեղափոխական շարժման պատմության համար», մասն ա. էջ 104, Բեռլին, ոուսերեն

և ինչը, վերջապես, հաղթանակեց Հոկտեմբերյան փոթորիկի նշանավոր որերին:

Մենչևիկների խռովությունը՝ լենինիզմի դեմ, յերկրորդ համազույժարկից հետո շատ շուտով դարձավ իսկական պառակտում և տարածվելով Ռուսաստանում մի կոմիտեից մյուսը, փաստորեն բաժանեց մինչ այդ: Կործես թե, միասնական կուսակցությունը յերկու իրար թշնամի մասերի, ըստ վորում մենչևիկները պատակաման հենց առաջին որերին արտասահմանում ստեղծեցին իրանց անկեղալ Ֆրակցիոն կենտրոնը:

Ընկ. Լյադովը պատմելով իրերի դրուժյան մասին արտասահմանում, պառակտումից հետո, ասում է, վոր «արտասահմանի ուստական դադութները մեծ մասը արտահայտեց ի հարկե, հողուտ մենչևիկներին»^{*}:

Բայց չէիկ պատգամախորները յերկրորդ համազույժարկից անմիջապես հետս վերադարձան Ռուսաստան, իսկ մենչևիկները Մարտովին և Տրոցկուն ուղարկեցին արտասահմանի դադութներում զեկուցումներ կարդալու կատարված պառակտման մասին, վորի հետևանքով և մենչևիկները գրավեցին այդ դադութները: Ռուսական դադութները այն ժամանակ մեծ մասամբ բաղկացած էյին բուրժուական ուսանողներից և այդ պատճառով դարձանալի չե, վոր մենչևիկներին համարյա ամենուրեք հաջողվում եր բանաձևեր ընդունել տալ ընդդեմ կենտրոնական կոմիտեյի ու կենտրոնական որդանի իմրագրության:

Այդ տեսակետից բայց չևիկները համար դժվար եր վիճել իրանց հակառակորդների հետ և այդ պատճառով

^{*} Մ. Լյադով — Կուսակցության կյանքից 1903-1907 թ. թ. (ուսուերեն) էջ. 6, 1926 թ., Մոսկովա

իրանց շատ քի: տեղերում հաջողվեց բաժանել մենչևիկներին իրենց համակրող իմրակներին — որինակ ինչպես Փարիզում, վորտեղ բայց չևիկներին հարեց Լինդովը, Բերլինում, ուր աշխատում եր Պյատնիցկին, Մյունխենում, վորտեղ ապրում եր այն ժամանակ Միլայովը (պոլիտիկոս), Լայպցիգում, ուր սովորում եր Ստ. Շահումյանը:

Իսկ մենչևիկները, խեղապես վոչ միայն սկսեցին բոյկոտի յենթարկել կենտրոնական կոմիտեն և կենտրոնական որդանը, վորոնց կազմը նրանց սրտովը չեր, այլ և անմիջապես ձեռնարկեցին կազմակերպելու իրանց Ֆրակցիաները թե՛ արտասահմանում և թե՛ Ռուսաստանում:

Մենչևիկների անհաշտ արամադության պատճառով, Լենինի, Պլեխանովի և Լենգնիկի բոլոր վորձերը՝ ստեղծված փակուղուց մի կերպ դուրս դալու, վոչ մի հետևանքի չհասան: Անելանելի դրուժյունը, վորի մեջ բնկել էյին մենչևիկներին ունհաճո կուսակցության կենտրոնական մարմինները, ավելի վատթարանում եր նրանով, վոր մենչևիկները, կազմակերպելով արտասահմանում իրանց ուղղողիցիոն Ֆրակցիան, ձեռնարկել էյին կազմակերպելու նույնպիսի Ֆրակցիաներ նաև Ռուսաստանում և կոչ էյին անում նրանց նույնպես բոյկոտ հայտարարել և Կ. կոմիտեյին և Կ. որդանին:

1903 թ. հոկտեմբերի սկզբներին յերկու կողմերի միջի վերանորոգված բանակցությունները նույնպես վոչ մի հետևանք չունեցան. Մարտովը, տեսնելով, վոր Լենինն ու Պլեխանովը պատրաստ են զեկուցումներ անելու, ավելի մեծ պահանջներ առաջադրեց — այս անգամ նա պահանջում եր կոոպտացիայի կարգով իմրագրական

կազմի մեջ մտցնել համագումարի կողմից չընդունված հին խմբագրութեան չորս անդամներին*) : Միևնույն ժամանակ մենչևիկներն աշխատում էին առանձին-առանձին ազդել «ուս. սոց. — դեմոկրատների արասասհմանյան լիգայի» անդամների վրա և ճնշում էին դործ դնում Պլեխանովի վրա :

Լիգայի համագումարում մենչևիկները մեծամասնություն էին կազմում և այդ պատճառով համագումարը դարձավ պառակտիչների կազմակերպված հարձակումների կենտրոն՝ ընդդեմ Կենտկոմի : Լիգայի համագումարը վերջացավ հոկտեմբերի վերջերին, կոնֆլիկտը ավելի սուր բնույթ ստացավ, վորովհետև Պլեխանովը յենթարկվելով իր բարեկամ Ալեսերոզի ճնշումներին, այժմ արդեն վճռականապես թեքվում էր մենչևիկների առաջարկության կողմը՝ խմբագրութեան մեջ հրավերելու խմբագրութեան հին չորս անդամներին : Համաձայնվել այդ առաջարկությանը նշանակում էր դիրքերը հանձնել պառակտիչներին և ընդառաջել այն ծրագրին, վորը գծել էր պառակտումների մեջ փորձված Ալեսերոզը : Ի պատասխան Պլեխանովի մենչևիկներին արած այս զիջողությանը, Լենինը հեռացավ «Իսկրա»-ի խմբագրությունից, իսկ Պլեխանովը, Ալեսերոզի ազդեցութեամբ, սկսեց արդեն ավելի վճռական ձևով խոսել հին խմբագրութեան չորս անդամների կոոպտացիայի մասին : Յեվ ահա 1903 թ. նոյեմբերի 26-ին «Իսկրա»-ի խմբագրութեան մեջ մտան բացի Պլեխանովից, Ալեսերոզը, Զասուլիչը, Մարտովը և Պոտրե սովը :

Այսպիսով Ալեսերոզի նախադի առաջին մասը վայրուն կերպով իրագործվեց . «Իսկրա»-ն ընկավ մենչևիկների ձեռքը և վոր ամենազլխավորն է ու ինչ նույնիսկ իրանք չէին սպասում, խմբագրութեան մեջ չկար Լենինը*):

Այսպես ապորինի կերպով կուսակցութեան կենտրոնական որդանը դրավելուց հետո մենչևիկները իրանց հարձակումներն ուղղեցին կուսակցութեան Կենտկոմի դեմ : Սկզբներում նրանց բոլոր փորձերը, չնայելով հաշվողաբար (ПРИМИРЕНЧЕСКИЙ) տրամադրված Կենտկոմի անդամ Նոսկովի ներկայութեանը, հաջողություն չունեցան . Կենտկոմը իր մեծամասնութեամբ լենինական էր : «Իսկրա»-ի խմբագրությունից հեռանալուց հետո Լենինը կոոպտացիայի կարգով մտավ Կենտկոմ, նրա հետ միասին նույն կարգով Կենտկոմ մտան նաև մի քանի ուրիշ բայլչևիկներ—Չեմլյաչկան, Զվերը (Մ. Մ. Եսսեն) և Լ. Բ. Կրասինը, ինչպես և հաշտվելու կողմնակից Գալլերինը (Կոնյազա) : Սակայն 1904 թ. դարնանը, յերբ Զվերը և Լենինիկը ձեռբակալվեցին, Զեմլյաչկան մտնելով Ուլեսայի կոմիտեյի կազմի մեջ, դրանով իսկ, մենչևիկները կարծիքով, դուրս եր յեկել Կենտկոմի կազմից և Կրժիժանովսկին հեռացել էր դործերից—Կենտկոմի կազմի մեջ մնացել էր միայն մեկ բայլչևիկ—Լենինը, ընդդեմ հաշտվելու տրամադրի յերբեք անդամների՝ Նոսկովի, Գալլերինի և Կրասինի : Իսկ յերբ Կենտկոմի կազմի մեջ յերեւացին Նոսկովի ամենա-

*) «Իսկրա»-ի 46, 47, 48, 49, 50 և 51 համարները խմբագրված են Լենինի և Պլեխանովի կողմից, № 52—միայն Պլեխանովի կողմից, իսկ № 53-ից նոր մենչևիկյան խմբագրութեան շրջանն է սկսվում առանց Լենինի :

*) Վ. Լենին—Յեկերի Ժողովածու 4, 5, յեր. 427—433

մտիկ բարեկամները՝ Լյուբիմովն և Կարպովը, ինչպես
և Դուբրովինսկին, այդ միջոցին այլևս Կենտրոնի նվա-
ճումը մենչեխիկները կողմից թե իդեապես և թե գործնա-
կանորեն—միայն ժամանակի խնդիր էր դառնում :

Այսպիսով արդեն 1904 թ. սկզբներին պարզվեց, վոր
կուսակցական բոլոր կենտրոնական որդանները—կենտ-
րոնական որդան «Բեկրա»-ն, Կուսակցութեան Խորհուր-
դը և նույնիսկ Կենտրոնը—դանվում էին մենչեխիկների
ձեռքում : Իսկ այդ նշանակում էր, վոր մենչեխիկները
նախ խախտեցին II համադումարի վորոշումները՝ կու-
սակցական կազմակերպութեանները կառուցման մասին
և յերկրորդ՝ ասորինի կերպով ձեռք ձգեցին ամբողջ
իշխանութեանը կուսակցութեան մեջ, ճնշելով այդպի-
սով կուսակցութեան այն մասին, վորը, յեղնե-
լով համադումարի վորոշումներից, աշխատում էր
կյանքում իրականացնել ամենազլխավորն ու հիմնակա-
նը, ինչը պետք է հանդիսանար համադումարի ամբողջ
աշխատանքների պակի—ստեղծել միասնական, հզոր,
կենտրոնացած, հեղափոխական պրոլետարական կու-
սակցութեան :

Դրութեանը առանձնապես վատթարացավ նաև
նրանով, վոր տարածախութեանները, պառակտելով
կուսակցութեան վերին շերտերը, սկսեցին տարածվել
նաև Ռուսաստանում և ընդգրկել տեղական կազմակեր-
պութեանները :

Համադումարի բայլչեիկ պատգամավորները, վո-
րոնց թվում էին ահանավոր դորձված կազմակերպիչ-
ներ, ռուսական սոցիալ-դեմոկրատիայի պիոներներ
(ինչպես որինակ Մ. Յիսակայա, Ա. Ստոպանի և ուրիշ-
ներ), վերագրանալով համադումարից հաշվետվութեան

նրեկայացրին վոր միայն իրանց կազմակերպութեաննե-
րին, այլ և աշխատեցին այցելել նաև մյուս կոմիտեներ-
ը, պառակտման խսկական պատկերն ու նրա պատճառ-
ները բացատրելու նպատակով :

Արդեն 1903 թ. վերջում համարյա թե Ռուսաստանի
բոլոր կազմակերպութեանները արահայտվեցին համա-
դումարում առաջացած պառակտման մասին : Պետեր-
բուրգի, Հյուսիսային, Մոսկովայի, Սարատովի, Յեկա-
տերինոպոլի, Վարոնեժի և Ռիդայի կազմակերպու-
թեանները (իսկրական) Որլովի, Ողեստայի, Ատրա-
խանի կոմիտեները և անդրիովկասյան միութեանը վո-
րոշակի կերպով ընդունեցին մեծամասնութեան տեսա-
կետը և խիստ կերպով արտահայտվեցին մենչեխիկների
կազմալուծիչ և պառակտողական վարմունքի դեմ :

Կուսակցութեան անդամների և կոմիտեների ճնշող
մեծամասնութեանը բայլչեիկները կողմն էր : Այս հան-
մութեան մեջ : Մի քանի խոսքով պատմելով այն մասին
թե բայլչեիկները ձեռք ձգելով իշխանութեանը սկսե-
ցին «մաքել» կոմիտեները փոքրամասնութեան ներկա-
յացուցիչներից, նա նկատում է. «Մենչեխիկներն իրենց
հերթին ամբանալով հարավային մի շարք կոմիտեներ-
ում (Դոնի, Սարկովի, Կիևի, Դոնեցի և Ղրիմի) զիմա-
ղբում էին կենտրոնական կոմիտեյի ճնշումներին, իսկ
մյուս կետերում աշխատանք էին տանում կուսակցա-
կան շարքային աշխատողների մեջ, վորոնց չըջանում
բյուրոկրատական կենտրոնացումը թուլացնելու դադա-
վարը՝ կարված կազմակերպված մասսաների կուսակ-
ցական ինքնագործունեութեան հետ, հավանութեան էր
պտնում» :

ինչ եւ վոր ասեր Մարտովը, մի բան միայն չեք
կարող բացասել, վոր ամենախոշոր պրոլետարական
շրջանների սոցիալ-դեմոկրատները— Պետերբուրգի,
Մոսկվայի, Յարոսլավի, Կոստրոմայի, Իվանովի, Տու-
լայի, Յեկատերինսկավի, Ուդեստայի, Կովկասի—բայլ-
չեիկների կողմն էին: Սիբիրի կազմակերպութուններ
ը, չնայելով վոր նրանց միութեան պատգամավորը
մենչեիկ Տրոցկին էր, շուտով ցույց տվին իրանց բայլ-
չեիկական դեմքը: Ուրալը թեև պրոլետարական մեծ
չրջան էր, բայց այդ միջոցին այնտեղի կազմակերպու-
թյունը ապրում էր անկման շրջան, այնպես վոր նրա
ձայնը առայժմ հաշիվ չէին կարող առնել պայքարող
կողմերից և վոչ մեկը: Յեթե ուշադրութեան առնենք
այն, վոր Կենտրոնական Ռուսաստանի կոմիտեների
մեծամասնությունը նույնպես բայլչեիկների կողմն էր,
ապա միակ զգալի պրոլետարական ույժը մենչեիկները
կարող էին համարել միայն դոնեցի շրջանի Ռ. Ս. Գ.
Միությունն ու Խարկովը: Իսկպես 1903 թ.
վերջերին Դոնեցի Միությունը իր մեջ միացնում էր
Յուզովկայի, Լուգանսկի, Մարիուպոլի, Տագանրոգի,
Յենակիեի, Բախմուտի, Սլավյանսկի, Ալմադնայայի և
Յուրեկայի կազմակերպությունները:

Բայց և այդ պրոլետարական կենտրոններում և
նույնիսկ Ռոստովում ու Խարկովում ամենուրեք գոյու-
թյուն ունեյին բայլչեիկներին համակրող պրոլետարա-
կան խմբակներ: Իսկ ինչ վերաբերում է մենչեիկների
բարեկամներին, ապա սրանց շարքերում կային այնպի-
սիները, վոր նույնիսկ իրանք, Փրակցիոն պայքարի մեջ
վոչ մի մաքրություն չձանաչող մենչեիկները, ստիպ-

ված ծածկում էին իրանց կողմնակիցների կարծիքնե-
րը, վորպես ծածուկ հիվանդություն:

Չնայելով, սակայն, վոր ռուսական պրոլետարական
կազմակերպությունների մեծամասնությունը բայլչե-
իկների կողմն էր, այս վերջինների դրությունը որե-
ցոր վատթարանում էր: «Խոկրա»-ն գտնվում էր մենչե-
իկների ձեռքում, իսկ բայլչեիկները վոչ միայն իրանց
թերթը չունեյին, այլ նույնիսկ վորևէ հնարավորու-
թյունից զուրկ էին պատասխանելու այն բոլորին, ինչ
գրվում էր բայլչեիկի դեմ Կուսակցութեան Կենտրոնա-
կան քրզանի եջերում:

Արևմտյան Յեվրոպայի սոցիալ-դեմոկրատները
ստանում էին միակողմանի մենչեիկական լուսաբանու-
թյուն համազումարի անց ու դարձի մասին: Վերջապես
հենց Ռուսաստանում մեր ս-դեմոկրատական կազմա-
կերպությունները հեղեղվում էին Կենտկոմի կողմից
արտասահմանից ուղարկվող մենչեիկներով:

Թե ինչ աստիճանի միակողմանի տեղեկություն
ունեն Արևմտյան Յեվրոպայի սոցիալ-դեմոկրատիան
կոտարված պառակտման մասին, վկայում է ընկ. Մ.
ն. Լյուդովը, վորը 1903 թ. վերջերին և 1904-ի սկզբը-
ներին ապրում էր Բերլինում: Յեթե նա ծանոթացավ Կ.
Կառուցիու, Ռ. Լյուքսենբուրգի և Տիչկոյի հետ և պատ-
մեց նրանց յերկրորդ համագումարում տեղի ունեցած
պառակտման մասին, վոչ միայն համակրություն չգտավ,
այլ ընդհակառակն, հանդիպեց բոլորովին բացասական
վերաբերմունքի. նրանք բացասում էին տարաձայնու-
թյունների մեջ վորևէ սկզբունքային առիթի դոյություն
և հաստատ համոզված էին, վոր տարաձայնություն-
ների միակ հանցավորը միմիայն Լենինն է: «Հիշում եմ

—զրում ե ր : Լյադովը—վոր հետագա տեսակցություններէց մեկէ միջոցին Կառւցիկն լավական վճռական կերպով հայտնեց ինձ . «Ի՞նչ եք ցանկանում , մենք ձեր Լենինին չենք ճանաչում , նա մեզ համար նոր մարդ է : Պիեխանովին , Ակսելրոզին մենք բոլորս լավ ենք ճանաչում : Մենք սովորել ենք միմիայն նրանց լուսարանութեամբ տեղեկանալ իրերի դրութեան մասին Ռուսաստանում :

Ի հարկե մենք չենք կարող հալատալ ձեր հալատախացումներին՝ թե Պիեխանովն ու Ակսելրոզը հանկարծ ոպպորտունիստներ են դարձել : Դա անհեթեթություն է : Հետեաբար ճիշտ չե Լենինը» :

Վոր ընկ . Լյադովը ներկա դեպքում անաչառ և սրճեկախիվ է , դրան ապացույց է Կ . Կառւցիկու գրած պատասխանը ընկ . Լյադովին (ապագրված և ուսուերև թարգմանութեամբ , «Իսկրա»-ի 66-րդ համարում) : Ընկ . Լյադովը ռուսական տարածախոթությունների մասին գրել էր « Neue Zeit »-ում (Կառւցիկու թերթը) հրատարակելու նպատակով մի հոդված , սակայն Կառւցիկն այդ հոդվածը չտպագրեց , բայց պատասխանեց ընկ . Լյադովին : Ինչպես յերևում է այդ պատասխանից , Կառւցիկն տարածախոթությունների պատճառը համարում էր լոկ . . . թյուրիմացությունները : Ակսելրոզը այդ առիթով հանդիսավոր կերպով գրում էր Կառւցիկուն (այս նամակը նույնպէս հրատարակված է «Իսկրա»-ի 68-րդ համարում) . « . . . Դու իրավացի յես քո յենթադրութեան մեջ . տարածախոթությունները մեր և Լենինի միջև Ռուսաստանում (բայց վոչ արտասահմանում) մեծ մասամբ թյուրիմացությունների արդյունք են . . . » :

Իայց իրերի դրութեանը կուսակցութեան ներսում ապացուցում էր , վոր պառակտումը հասարակ թյուրիմացությունների արդյունք չէ . այն կրքոտ պայքարը , վոր սկսել է յին մենչեիկները Ռուսաստանում կազմակերպութեան մեջ գերիշխելու նպատակով , ցույց էր տալիս , վոր վեճը ինչ վոր ավելի խոշոր հարցի մասին է , բան հասարակ կազմակերպչական հարցերը :

«Մենչեիկները վճռել է յին նվաճել Ռուսաստանը—ասում է այս առթիվ Լյադովը—և շարժել է յին դեպի այն կողմը արտասահմանի ուսանողների ամբողջ զորամասերը : Նրանց հրահանգ էր տրվում այնքան էլ աշխատանք չտանել տեղերում , այլ ոգավել ամեն առիթից անցնելու կոմիտեների մեջ , հաստատվել այնպես և ոգավելով կոպուտացիայի իրավունքից՝ կոմիտեների տեղամ անց կացնել հարազատ փորձված մենչեիկների : Այդ տակախայի հետեանքով առաջ յեկալ կոմիտեիների , ժողովականների , կնիք պահողների մի նոր տիպ : Այդ տիպը բոլորովին աշխատանք չեր տանում , վորովհետև վախենում էր մասնվերուց , աշխատանքը թողնում էր տեղական աշխատողներին , իսկ ինքը միայն բանաձևեր էր Կառւցիկուն մենչեիկների ողտին : Տեղական աշխատողները ուժատուա է յին լինում ծառայելով սրեցոր գորացող բանվորական շարժմանը : Արտասահմանի գրականութեան նրանց ձեռքը բոլորովին չէր ընկնում , արտասահմանի գործերի մասին նրանք տեղեկանում է յին ամենաաղալաղված ձևով մենչեիկյան կոմիտեիներէից : Այն սրից , յերբ Լենինը խմբագրութեանից հեռացալ , մենք բայլչեիկներս մեր սեփական գրականութեանը չունեիինք : Այն ժամանակ բացի Լենինից արտասահմանում ուրիշ բայլչեիկ գրող չկար» : Մինչդեռ

«Իսկրա»-ն ամեն մի համարում աղտոտություններ եր, վոր թափում եր հակառակորդները գլխին. մենչևիկյան գրողների գրչի տակից դուրս ելին գալիս անընդհատ հողավաճներ ու բրոշյուրներ, վորոնք պառակտումը լուսարանում ելին շատ աչառու կերպով. իսկ բայլեզվիկները չունեյին վոչ մի ջոցներ և վոչ թերթ, վորպեսզի կարողանային այդ բոլորին արժանի պատասխան տալ:

Այսպիսի պայմաններում կուսակցութեան մեջ նույն-մալ դրություն ստեղծել, հնարավոր եր միայն մեկ հանապարհով—նոր արտակարգ համագումար հրավիրելու միջոցով: Այդպես ել հարցը գրեց Լենինը 1904 թվի հունվարին կուսակցութեան Խորհրդի նիստում: Խորհրդի մեջ այն ժամանակ մըտնում ելին Ակսելրոզը, Մարտովը, Պլեխանովը, Լենինը և Լենգնիկը: Լենինի այս առաջարկութեանը Խորհրդի առաջին յերեք անդամների կողմից վճռական դիմադրութեան հանդիպեց, այդ պատճառով բայլեզվիկները ստիպված ելին սպասել, մինչև կուսակցութեան հասարակական կարծիքը կհաստենանա այն չափով, վոր հնարավոր լինի, հենվելով այդ կարծիքի վրա, վճռական բայլերի դիմել: Կուսակցութեան հասարակական կարծիքին դիմելն անհրաժեշտ եր, մանավանդ այն պատճառով, վոր մենչևիկները ապրիլին կերպով գրավելով կենտրոնական Որգանն ու կուսակցական Խորհուրդը, բայլեզվիկ աշխատանքից զատ, տանում ելին նաև գաղտնի ֆրակցիոն աշխատանք, ունենալով իրանց գաղտնի մենչևիկական կենտրոնը Բյուրոյի անվան տակ, վորի մեջ մտնում ելին Ակսելրոզը, Դանը, Մարտովը, Պոտրե-տովը և Տրոցկին:

Իրեմել կուսակցութեանը անհրաժեշտ եր այն պատճառով, վոր քաղաքական անցքերը Ռուսաստանում դարգանում ելին գլխապտուկա արագութեամբ, իսկ միասնական, համախմբված կուսակցութեան այլևս դրություն չուներ. տեղերում համարյա ամենուրեք արչեն գոյություն ունեյին յերկուական կազմակերպություններ:

1903 թ. հուլիսյան մասսայական դործադուլները Ռուսաստանի հարավում միայն հոյակապ ողակն ելին կազմում մասսաների այն ահազին քաղաքական շարժման, վորը բռնկել եր արդեն մեր յերկրում հարյուրամյակի սկզբից (1901 թ.): Գործադուլները, ցույցերը, տե-րորիստական ակտերը հետևում ելին մեկը մյուսին 1903 և 1904 թվականների ընթացքում: Սեպտեմբերի 2-ին Բազմում տեղի ունեցավ ցույց, նույն ամսի 9-ին ցույց տեղի ունեցավ Ռոստովում, նույն որը սկսվեց տպագրիչների խոչոր դործադուլները Մոսկվայում. հոկտեմբերին ցույցեր տեղի ունեցան Տոմսկում (22-ին) և Սարատովում (28-ին), նույն ամսում մահափորձ կատարվեց Կովկասի փոխարքայի դեմ: 1904 թ. հունվարին (5-ին) ցույց տեղի ունեցավ Թիֆլիսում: Ծապոնիայի հետ սկսած պատերազմը (հունվարի 27-ին) վոչ միայն չկասեցրեց շարժումը, ընդհակառակն, պատերազմն ունրա հետ կապված կրիզիսը ավելի սրեցին դասկարգային հակասութեանները և ուժեղացրին դժգոհութեանը տիրող կարգերի դեմ:

Գործադուլները չեյին դադարում և վորքան հայտարարում գորահավաքը ավելի ու ավելի յեր ընդգրկում ազգաբնակչութեան լայն խավերին, գործադուլների հետ միասին սկսեցին ծագել նաև խռովութեաններ պահեստի

ցության անագին անուամբ: «Յես դրանից առաջ—գրում է նա—մի տարուց ավելի գտնվում եյի արտասահմանում: Յես միանգամայն զարմանում եյի, թե վորքան անել եր մեր կուսակցությունն ու բանվորական շարժումը այդ ժամանակամիջոցում: Բացի պաշտոնական կոմիտաչիներից, վորոնց մենք ճանաչում եյինք արտասահմանյան գրագրությունների միջոցով, առաջ եր յեկել արդեն համոզված սոցիալ-դեմոկրատ կուսակցականների մի ուժեղ շերտ, վորը մեծ ու խորացրած աշխատանք եր տանում մասսաների մեջ: Արտասահմանյան գրականությունը, վորի առաջման վրա մենք այնքան շատ աշխատում եյինք, բառի բուն նշանակութեամբ մի կաթիլ եր գրականութեան այն ծովի մեջ, վորը ստեղծվում, տպագրվում և տարածվում եր տեղերում*):

Սակայն ամենուրեք, ըստ ընկ. Լյադովի, նկատվում եր ղեկավարութեան, Կենտկոմի գործակալների, կուսակցական կենտրոնական հիմնարկների հետ կապի և կուսակցական գրականութեան բացակայութեան: Միևնույն ժամանակ ամենուրեք իր անբեւսութեամբ մարդու աչք եր ծակում կոմիտեյի-ժողովականը, «կոմիտեյի կնիքը պահողը», մասսաների հետ բոլորովին չկապված այս «տիպը», վորը, ինքն ել միակողմանի լուսարանված լինելով աղավաղում եր կենտրոնում գոյութեան ունեցող իրերի իսկական գրութեանը: Բայց դրա փոխարեն տեղերը և դիտակից սոցիալ-դեմոկրատների մասսան այդ փակուղուց դուրս գալու միակ յիլքը տեսնում եյին նոր համագումար հրավիրելու մեջ:

*) Մ. Լյադով—«1903-1907 թ. կուսակցութեան կյանքից»:

Պետերբուրգում, ընկ. Լյադովի ասելով, մեծ աշխատանք եր տարվում, բայց կազմակերպութեանն ուժեղ չեր և բանվորական մասսաները, կորցնելով իրանց հավատը ղեպի կուսակցութեանը, հարում եյին Գապոնի միութեանը: Տվերում, վորտեղ այն ժամանակ բնակվում եր Ա. Ա. Բոգդանովը, աշխատանքը լայնանում եր, ընդգրկելով նույնիսկ գյուղացիներին, բայց միջոցների պակասութեան եր զգացվում, կապը կենտրոնի հետ թույլ եր: Տուլայում, վորտեղ աշխատում եր Ի. Ի. Ստեպանովը, կատարվում եր նույնպես մեծ աշխատանք. կազմակերպութեանը տրամադրված եր բայելիկորեն և նոր համագումարի կողմնակից եր: Ուֆայում, Սիբիրում, Մոսկվայում, մեկ խոսքով ամենուրեք, ուր մասսաների մեջ աշխատանք եր տարվում, կազմակերպութեան անդամները նոր համագումար հրավիրելու կողմնակից եյին:

Աչքի ընկնող աշխատողներից միայն Մամարայում գտնվող Դուբրովինսկին եր, վոր հաշտասեր տրամադրութեան ունեւր, և յենթադրում եր, վոր առանց համագումարի ել հնարավոր ե հաշտութեան գալ:

Իսկ արտասահմանում կոնֆլիկտը ավելի ու ավելի յեր սրվում: 1904 թ. մայիսին Ռոզենբերգ-Ջվերելային փոխարինելու համար արտասահման յեկավորելուց—Նոսկովը փոխանակ հաշտեցնելու, ավելի խճճեց հարցը իր յերկդիմի և վոչ անկեղծ վարմունքով: Նա մի կողմից իբր թե պաշտպանում եր Լենինին, մյուս կողմից միևնույն ժամանակ հավատացնում եր մենչևիկներին, թե ինքն ել հաշտեցուցիչ տրամադրութեանն ունի և վոր «Կենտկոմում կազմակերպվում ե մեծամասնութեան»:

վրը պատրաստ ե տապալելու Լենինին, քանի վոր նրա
բաղադրականութունը վրդովմունք ե առաջացնում»*) :

Դեռ մայիսին, Նոսկովի գալուց անմիջապես հետո
Կուսակցութեան Խորհուրդը, վորտեղ Կենտկոմի յերկ-
րորդ ներկայացուցիչը Գլեբովն եր, 4 ձայնով ընդդեմ
Լենինի մեկ ձայնի, դեմ արտահայտվեց համադումար
հրավիրելու ադխտացիային, ըստ վորում Նոսկովը
Կենտկոմի անունից ուղարկատում ներկայացրեց Լենին-
ին—կամ հրաժարվել համադումար հրավիրելու համար
ադխտացիա մղելուց կամ հեռանալ Կենտկոմի կազմից :

1904 թ. վերջում Գլեբովին գրած նամակում Լե-
նինը մերկացնում եր Նոսկովի յերկերեսանի քաղաքա-
կանութունը, վորը յերբեմն հավատացնում եր Կենտ-
կոմին, թե ինքը Նոսկովը կատարի Լենինին հպատակվել
Խորհուրդին, իսկ մյուս կողմից ել համոզում եր Լենինին,
թե ինքը նրա հետ միասին կենթարկի Խորհուրդը Կենտ-
րոնական Կոմիտեյին և միևնույն ժամանակ Լենինի
թիկունքից անթույլատրելի միջոցների յեր դիմում նրա
դեմ :

Նոսկովը Լենինին առաջարկում ե մտնել Կենտրոնա-
կան Որդանի խմբագրութեան մեջ և միևնույն ժամանակ
անդեկացնում նրան, թե քանի վոր Լենինը չեր առար-
կում կոսպտացիայի կարգով Կենտկոմի անդամների
կազմի մեջ հաշտեցման յերեք նոր կողմնակիցներ մըտ-
ցնելու դեմ (Դուբրովինսկի, Կարպով և Լյուբիմով),
այս ուրեմն նրանք համարվում են ընդունված : Լենինը
այդ առաջարկութեանը պատասխանեց մի խիստ նամա-

*) «Պ. Բ. Ակսելորդի և Յու. Ռ. Մարտովի նամակ-
ները» (Ռուսերեն) էջ 106 :

կով, վորի մեջ մատնանշելով մենչեիկների կեղծավո-
րութունը, հայտնում եր, վոր նրանք շարունակում են
խախտել կուսակցութեան բոլոր կանոնները և միևնույն
ժամանակ կարծում են, վոր մեխանիկական ձևով նրա
ձայնը Կենտկոմում և Կենտրոնական Որդանում խեղ-
դելով կարելի կլինի հաշտվել : Նա ցույց եր տալիս, վոր
պատակտումից խուսափելու միակ յեղքը կարող ե լինել
միմիայն բացարձակ ու ազնիվ պայքարը և վոր բայժե-
վիկները այդ պայքարից չեն հրաժարվի, մինչև վոր
հարցը չվճռվի համադումարում :

Այժմ սակայն ավելի ու ավելի յեր պարզվում, վոր
միակ իդեական պայքարով մենչեիկներին և նրանց կազ-
մարուծող աշխատանքի դեմ վոչինչ անել չի կարելի :
Նրանք համադումարից անմիջապես հետո, չհպատակ-
վելով նրա վորոշմանը, բոյկոտի եյին յենթարկել Կենտ-
րոնական Որդանը, հրաժարվելով հանձնես Մարտովի
մտնելու նրա խմբագրական կազմի մեջ : Համադումար-
ից անմիջապես հետո դումարել եյին իրենց արտասահ-
մանյան անլեզալ կոնֆերենցիան, վորտեղ վորոշել եյին
սկսել պայքար Կենտկոմի և առհասարակ բայժեիկների
դեմ, կազմակերպել եյին իրենց մենչեիկական Կենտկո-
մը (Բյուրո), Պլեխանովին համոզել եյին խախտելու
համադումարի կամքը, փոփոխութեան յենթարկել Կեն-
տրոնական Որդանի կազմը, մացնելով այնտեղ խմբագրութեան
հին անդամներին, վորոնց համադումարը չեր ընտրել :
Իրանց ձեռքն առնելով այսպիսով Կենտր. Որդանը և
Կուսակցութեան Խորհուրդը, նրանք սկսել եյին բոյկոտի
յենթարկել Կենտկոմը և ուսական կազմակերպու-
թյունները : Ոգտագործելով «Բսկրայի» եջերը, նրանք
ուպատրում եյին միմիայն մենչեիկական բանաձևերն ու

բողոքները բայձեիկների դեմ, այդպիսով միակողմանի
լուսաբանություն տալով պառակտմանը: Ողտվելով
կենտկոմի բայձեիկ անդամների ձերբակալությունից
(Լենգնիկ, Գուսարեվ) և ապրիլի կերպով հանելով
կենտկոմի կազմից Ջեմլյաչկային, նրանք կոտուտա-
ցիայի կարգով լրացրել էին նրա կազմը բացառապես
մենչեիկներով և հաշտվելու կողմնակիցներով (Նոսկով,
Կրասին, Գալպերին, Դուբրովինսկի, Կարպով և Լյուբի-
մով): Այսպիսով տիրանալով կուսակցութայն բոլոր
կենտրոնական օրգաններին, նրանք շարունակում էին
իրենց պառակտողական, Ֆրակցիոն աշխատանքը և հու-
լիսի վորոշման համաձայն աշխատանքից հեռացնելով
Լենինին, առավել ևս զրկել էին բայձեիկներին պա-
տասխնատու աշխատանք տանելու հնարավորություն-
ներից: Նրանց հեռացրել էին սպարանից, Ռուսաստան
գրականություն փոխադրող ապարատից ու զրկել մա-
մուլում հանդես դալու հնարավորություններից: Միաժա-
մանակ նրանք պառակտողական աշխատանք էին տա-
նում ամենուրեք նաև Ռուսաստանում, ձգտելով ստեղ-
ծել զուգահեռ կազմակերպություններ կամ ուղղակի
կենտկոմի կամ ըով քայքայելով մեծամասնութայն կողմ-
նակից կազմակերպությունները (այդպես, որինակ,
լուծվեց Հարավային Բյուրոն):

Մենչեիկների զեկավար կենտրոնը—Ակսելրոդ,
Մարտով և Դան—հավատ չէր ընծայում նույնիսկ հա-
մաձայնապաշտ ու մենչեիկական կամ ըքին հլու կենտկո-
մին ու ծածկում էր նրանից կուսակցութայն միջոցնե-
րը: Յերբ հուլիսյան վորոշումով փաստորեն Լենինը հե-
ռացված էր աշխատանքից, մենչեիկները կեղծավորա-
բար ստեղծեցին հատուկ հանձնաժողով, վորին պիտի

անցներ կուսակցութայն բոլոր արտասահմանյան տեխ-
նիքական հիմնարկների ու ձեռնարկների վարչությունը:
Այդ հանձնաժողովը կազմված էր կենտկոմի համաձայ-
նապաշտ իրապես մենչեիկներից վոչնչով չտարբերվող
ներկայացուցիչներից, մենչեիկական Լիզայի և «Ռուկ-
րա»-ի խմբագրութայն ներկայացուցիչներից: Սակայն
նույնիսկ այսպիսի հանձնաժողովից մենչեիկների դե-
կավար կենտրոնը ծածուկ էր սրահում կուսակցական
ընդհանուր միջոցները:

Այժմ, տվելի քան քսան տարի անց, ուղղակի դար-
մանում ես թե վոր աստիճանի չէին հարդում կուսակ-
ցութայնը և անդադար կազմալուծում էին նրան մեն-
չեիկները ու ինչ աստիճանի մոլեռանդութայն հավա-
տարիմ էին կուսակցութայն միասնականութայն գաղա-
փարին բայձեիկները, վորոնք ձեռնպահ էին մնում ի-
րանց Ֆրակցիոն կազմակերպություններն ստեղծելուց
մինչև 1904 թվի ոգոստոս ամիսը, յերբ վերջապես բո-
լորիս համար պարզ դարձավ, վոր բացի արտակարգ հա-
մադումար հրավիրելուց ուրիշ յեւք չկա:

Ամենաբժանդիր աչառու մենչեիկ պատմաբանն
անդամ, ծանոթանալով նույն մենչեիկական փաստա-
թղթերի հետ, պետք է վոր բարեխղճութայն ասի, թե
յերկրորդ համազումարից հետո, իրանք մենչեիկներն
էին, վոր սրտակտում առաջացրին և դործադրեցին
իրանցից կախված բոլոր միջոցները թե՛ կուսակցութայն
մեծամասնութայն ձայնը խեղդելու և թե՛ նրանց դեմ
յացարձակ պայքար սկսելու համար:

Սակայն ճնշել կուսակցութայն մեծամասնությունը
անկարելի յե—չկան այդպիսի ույժեր, վորքան ել պաշ-

տոնական (կամ վոր պիլի վաս ե, սուրբ պատուական) կենտրոնները ուժեղ լինեն, մեծամասնության կամ քր վաղ թե ուշ կհաղթանակի:

Մենչեիկները ձեռքում դռնվող կենտրոնական հիմնարկների մասը կուսակցության հասարակական կարծիքը ճնշելու սեփմը վերջի վերջս բերեց—հասցրեց բայլչեիկական կենտրոն ստեղծելու անհրաժեշտությանը. կենտկոմի հուլիսյան դեկլարացիայից հետո նույնիսկ ամենախաղաղ արամագրված բայլչեիկներն էլ տեսան, վոր այլ կերպ կուսակցության կամքը արտահայտել անկարելի չէ: Բայլչեիկական կենտրոն ստեղծելու պատմությունը հետևյալն է:

Լենինի պատասխանը Նոսկովին նրա առաջարկությանը՝ մասնակցել «Էսկրա»-ի խմբագրության մեջ ե հավանություն տալ կենտկոմի յերեք նոր անդամները կոոպտացիային—ուժեղ կերպով քննվում եր Լենինին մոտ կանգնած բայլչեիկների շրջանում, Ժընևում: Ինքնաբերաբար, բնականաբար միտք ծագեց համերաշխի այն մտքերին, վորոնք արտահայտված էին Լենինի նամակ—պատասխանում: Լենինն այնտեղ այն միտքն էր հայտնել, վոր յեթե կչարունակվի կուսակցական կենտրոնական հիմնարկների մենչեիկացման բունի տապալկան, ապա կոնֆլիկտը լուծելու միակ միջոցը մնում է միմիայն արտակարգ համագումարը:

Այս միտքը քննելու, հիմնավորելու և զարգացնելու նպատակով վճռվեց գումարել կոնֆերենցիայի նման մի բան: Ընկ. Լյազովը հետևյալն է պատմում այդ մասին. «Իլլեջը անմիջապես կալով այդ մտքից: Պետք է ժողովել բոլորին, ում վրա կարելի չէ լիովին հույս դնել, ով պատրաստ է մեզ հետ հաստատուն կերպով գնալ միջև

վերջ: Բոլորովին կարիք չկա, վոր դա լինի պաշտոնական կոնֆերենցիա, կոմիտեների պատգամավորներով: Վերջում միայն այդ կոնֆերենցիայի վորոշումների մասին սկսեց կլինի տեղեկացնել մեր տեղական կազմակերպություններին: Յեթե նրանք մեզ հետ կհամաձայնվեն, այն ժամանակ Ռուսաստանում կարելի կլինի գումարել կուսակցական կոմիտեների մեկ ընդհանուր կամ մի քանի պաշտոնական կոնֆերենցիաներ: Հիշում եմ, սկզբում հավաքվեցինք 19 հոգի: Այդ կոնֆերենցիան դումարվեց վոչ թե ոգոստոսին, ինչպես սովորաբար դրում են, այլ սեպտեմբերին, բայց կոնսպիրացիայի նպատակով վորոշվեց անվանել այն ոգոստոսյան:

Այս կոնֆերենցիայում ել ընդունվեց 22-ի հայտնի բանաձևը, վորը այնուհետև տպագրվեց Շախովի «Պայքար համագումարի համար» գրքում և առանձին հրատարակվեց 1904 թ. ոգոստոսին Ռիգայի, և սեպտեմբերին Մոսկվայի կոմիտեների կողմից: Այդ բանաձևը զետեղված է Լենինի գրվածքների հինգերորդ հատորում:

Այդ բանաձևում կուսակցությունը բացարձակ կերպով կոչ է անում պայքարել համագումարի համար:

Յույց տալով, վոր կուսակցական կրիզիսը քայքայում է կուսակցությունը, բանաձևը տալիս է փոքրամասնության բնութագիրը: «Մենչեիկների դաշնակիցները—ասված է բանաձևի մեջ—հանդիսացան բոլոր այն տարրերը, վորոնք թեորիայում կամ գործնականում չեզվում էին սոցիալ-դեմոկրատիզմի ճշգրիտ սկզբունքներից, քանի վոր միմիայն խմբակայնությունը (կրոս-կովչչինա) կարող եր պահպանել այդ տարրերի իդեալական անհատականությունն ու ազդեցությունը, այն ինչ կուսակցությունը սպառնում եր լուծել նրանց և զրկել

վորեւ ազդեցութիւնից (եկոնոմիստներ, «Ռաբոչե Գիլո»-ի կողմնակիցներ և այլն) :

Այնուհետև մատնանշելով, վոր փոքրամասնութիւնը հարում են ինդիվիդուալիստական և ուղարտյունիստական հովեր ունեցող ինտելիգենցիայի, գլխավորապէս արտասահմանում գտնվող խավեր, բանաձևը, սակայն, կարականապէս բողոքում եր վորոչ տարրերի այն փորձերի դեմ, վորով նրանք համազումարի համար մղվող պայքարը կապում եյին բայլչեիկներին՝ պատակտում առաջ բերելու ցանկութեան հետ :

«... Մենք չենք յենթադրում պատակաման հնարավորութիւնը»—ասված է բանաձևում և ընդդժվում է, վոր «տարածայնութիւնները այժմ չեն պարզաբանվում, այլ փնտրովում և ստեղծվում են», վոր կուսակցութիւնը, վորպէս միասնական ամբողջութիւն, լարդեն դոյութիւն չունի և վոր միմիայն համազումարն է, վոր կարող է նորից միացնել և վերականգնել այն :

Բանաձևը վերջում դիմում է Ռուսաստանի կուսակցական կազմակերպութիւններին, վորոնք կատարում են իսկական հեղափոխական դործ և կամենում են, փնտրում են վոր թե արտասահմանյան առանձին խմբակներին, այլ միասնական ընդհանուր կուսակցական համազումարի ղեկավարութիւնը :

Բանաձևում արտասայտվում և նշվում եյին այն ցանկութիւններն ու միջոցները, վորոնք պետք է կանոնավորելին կազմակերպչական հարաբերութիւնները, ինչպէս կենտրոնական որգաների, նույնպէս և այս վերջինների ու կուսակցութեան տեղական կոմիտեներին միջև (կուսակցական Սորհրդի, կենտրոնական որգանի կազ-

մակերպութիւնն ու կազմը, կուսակցութեան կանոնադրութեան առաջին կետի ձևակերպումը և այլն) :

Այսպիսով բանաձևի մեջ կարծես թե չկա կատեգորիկ պնդում, թե բայլչեիկներին և մենչեիկներին միջև դոյութիւն ունին անլուծելի սկզբունքային տարածայնութիւններ («տարածայնութիւնները այժմ չեն պարզաբանվում, այլ փնտրվում են») : Սակայն բանաձևի այն մասում, վորտեղ խոսվում է նոր «Ռսիլո»-ի կապի մասին ուղարտյունիստների հետ (եկոնոմիստներ, «Ռաբոչե Գիլո»-ի կողմնակիցներ և այլն), ինչպէս և «Մի քայլ առաջ, յերկու քայլ հետ» աշխատութեան մեջ, բավական պարզ կերպով հնչում է կուսակցութեանը նախազգուշացնող այն ձայնը, թե կազմակերպչական տարածայնութիւնները և առանձնապէս փոքրամասնութեան դաշինքը ուղարտյունիստների հետ, սպառնում է քարչ տալ նաև մենչեիկներին դեպի ուղարտյունիզմի և մանր բուրժուական համաձայնողականութեան ճահիճը :

Այս կոնֆերենցիայում իսկ ընտրվեց «Մեծամասնութեան կոմիտեյի Բյուրո», ըստ վորում վորոչկեց տեղական շրջանային կոնֆերենցիաներ գումարելով, աջակցութիւն և հենարան գտնել ուսական սոցիալ-դեմոկրատական կազմակերպութիւններին մեջ : Բյուրոյի մեջ մտան Ա. Ա. Բոգդանովը, Մ. Ն. Լյազովը, Պ. Պ. Ռումյանցեվը, Չեմլյաչկան (Ս. Չարլիկինը) և Մ. Մ. Եսսենը (Չվեր) : Հետագայում Բյուրոյի մեջ մտան ուսական կոմիտեներին ներկայացուցիչները և կոնֆերենցիաների պատգամավորները, այն է՝ Ս. Ի. Գուսեվը, Ա. Ի. Ռիկովը և Լիտվինովը :

Կոնֆերենցիայից հետո Բյուրոյի անդամներն ու գործակալները համապումարը նախապատրաստելու նպատակով, հետզհետե Թուսաստան մեկնեցին:

Սրա հետ միաժամանակ կատարվեց նաև մեկ ուրիշ կարևոր աշխատանք, կազմակերպվեց բայլչեիկյան արասահմանյան գրական կենտրոնի և ստեղծվեց բայլչեիկյան հրատարակչութիւն:

Դեռ 1904 թ. ամառը ժննդում սկսվել էր բայլչեիկական բրոշյուրների հրատարակութիւնը «Լենինի և Բոնչ-Բրույեվիչի հրատարակչութիւն» Ֆիրմայի տակ, իսկ շուտով հաջողվել էր նախապատրաստական աշխատանքի ձեռնարկել բայլչեիկական լրագիր հրատարակելու: Լրագիրը Լենինի առաջարկութեամբ անվանվեց «Վոլերոյ» («Յառաջ»): Սրա առաջին համարը լույս տեսավ 1905 թվի հունվարի 4-ին, նոր տոմարով: (Լույս տեսավ ընդամենը 18 համար, վերջին համարը 1905 թ. մայիսի 18-ին): Գրական կենտրոնը կազմում էին՝ Լենինը, Լուևաչարսկին, Ումինսկին և Վորովսկին, նույնպես և փաստորեն Ն. Կրուպսկայան, վորի սւտերին էր ծանրացած սոսական կազմակերպութիւնների հետ կապ և հարաբերութիւն պահելու աշխատանքի ամբողջ ծանրութիւնը: Թերթին մոտիկ մասնակցութիւն ունեցին Լ. Պ. Մանգելտամը (Լ. Ս. Ֆոտեվան, Ի. Ա. Թեոզորովիչը, Կարպինսկին և ուրիշները: Թղթակիցներից Ումինսկին հիշատակում է Ա. Ի. Ժեխազարովային և Վ. Ա. Բոնչ-Բրույեվիչին (վոր անկեղալ կերպով Թուսաստան էր անցել):

Բայլչեիկները ողջատոյան կոնֆերենցիան ջերմ արձագանք դտավ Թուսաստանում: Համապումարը նախապատրաստելու և բայլչեիկների կենտրոնի հանդեպ

համակրական միտողորտ ստեղծելու ահագին աշխատանք կատարեցին Ջեմլաչկան, Լյադովը և ուրիշ բայլչեիկները, վորոնք մասամբ ժննդից ուղևորվել էին Թուսաստան, մասամբ էլ գտնվում էին տեղերում: (Գրուսեվ, Բոգդանով, Լիտվինով, Ստոպանի, Ռիկով և ուրիշները):

1904 թ. աշնանը, ինչպես առատութեան յեղջյուրից, սկսեցին մեկը մյուսի յետեից տեղալ կոմիտեների բանաձևերը, վորոնք համերաշխում էին 22-ի բանաձևին:

Այդ բանաձևերը շոշափում էին ինչպես Կենտկոմի հուլիսյան ղեկարացիայի մեջ արծարծած հարցերը, նույնպես և 22-ի բանաձևի հարցերը: Ամենուրեք խիստ դատապարտում էին Կենտկոմի դերքը և պաշտպանում էին 22-ին, կոչ անելով անմիջապես դումարել յերրորդ համագումար: Կովկասի միութիւնը, Թիֆլիսի, Բախուսի և Իմերեթ ու Մինգրեիլիայի կոմիտեները, Կրեմենչուզի, Ռիզայի, Պետերբուրգի և Յեկատերինոսլավի կոմիտեները, այսինքն համարյա բոլոր խոշոր պրոլետարական կազմակերպութիւնները դատապարտում էին նոր «Իսկրա»-ն, Կուսակցութեան Սորհուրդն ու համաձայնապաշտ Կենտկոմի յերկերեսանի քաղաքականութիւնը և պահանջում էին յերրորդ համագումար հրավիրել:

Մենչեիկական կազմակերպութիւնների ձայները խեղդվում էին բայլչեիկական կոմիտեների այդ բողոքի ձայների մեջ:

Այս բողոքները բայլչեիկ աշխատողների ջանքերով հաջողից կազմակերպված հունի մեջ դնել յերեք ջրջանային բայլչեիկական կոնֆերենցիաներում, վորոնք

գումարվեցին նոյեմբերին: Կովկասյան կոնֆերենցիային մասնակցում էին Բաբուրի, Թիֆլիսի, Բաթումի և Խմելնիցի-Մինսկի լիայի կոմիտեները: Հարավային կոնֆերենցիային մասնակցում էին Ուկրաինայի և Յեկատերինոսլավի կոմիտեները և Հյուսիսային կոնֆերենցիային մասնակցում էին Պետերբուրգի, Մոսկվայի, Նիժնի-Նովոգորոդի, Տվերի և Ռիգայի կոմիտեները: Այդ կոնֆերենցիաներում վերջնականապես կազմակերպվեց «Մեծամասնության կոմիտեների բյուրոն», վորի հիմնական միջուկը ստեղծվել էր ժնևում, ոգոստոսի կոնֆերենցիայում:

Հյուսիսային կոմիտեների բանաձևերը դատապարտում էին մենչևիկական կենտրոնների և համաձայնապաշտ Կենտկոմի քաղաքականութունը, վողջունում էին Լենինի գրական խմբակի գործունեությունը և ուղղութունը պահանջում էին համագումար և կազմակերպել բյուրո:

Համագումարի մասին բանաձևի մեջ ասված էր «... Պաշտոնական հարցապնդում անել Կենտկոմին պատրաստ ե արդյոք Կենտկոմը վերջապես իր վրա վերցնել արտակարգ համագումար հրավիրելը և խնդրել յերկու շաբաթիվ ընթացքում վորոշ պատասխան այս հարցին: Այս հայտարարությունը Կենտկոմին հանձնելու և նրանից պատասխան ստանալու համար Հյուսիսային շրջանի կոմիտեների կոնֆերենցիան լիազորում է Պետերբուրգի կոմիտեի պատգամավորին»:

Բյուրոյի մասին ընդունած բանաձևում ասված էր, վոր «ընդհանուր կուսակցական աշխատանքի մեջ առանձին կոմիտեներին միացնող իդեական և գործնական կենտրոնների փաստացի բացակայությունը» և «ներկու-

սակցական ծայրահեղ աննորմալ հարաբերությունները», հարկադրում են կոնֆերենցիային ընտրել «առանձին բյուրո, հանձնարարելով նրան անմիջապես անցնել համագումարի կազմակերպման գործին, իրավունք վերապահելով նրան (բյուրոյին) այն դեպքում, յեթե Կենտկոմը բացասական պատասխան կտա կոնֆերենցիայի կողմից առաջադրած հարցին, իրան հայտարարել կազմակերպիչ կոմիտե»:

Հյուսիսային կոմիտեների կոնֆերենցիայի այս վարոշումը անհրաժեշտ էր և նպատակահարմար, վորովհետև պայքարը յերկու Փրակցիաների միջև տեղերում անսովոր սուր կերպարանք էր ընդունել: Այդ պայքարը ավելի սրվեց, յերբ լույս տեսան «Իսկրա»-ի հայտնի «Միայն կուսակցության անդամներին» վերնագրով նամակը և Լենինի պատասխան հոդվածը.— «Զեմստվային կամպանիան և «Իսկրա»-ի սլանը», վորից պարզվեց, վոր տարաձայնությունները փոքրամասնության և մեծամասնության միջև կրում են վոչ միայն կազմակերպչական, այլ և տակտիկական բնույթ:

Այն դժվարությունները, վորոնց մեջ ընկել էր կառավարութունը պատերազմի դաշտում ունեցած անհամոզությունների հետևանքով, ուժեղացրին լիբերալ ուղիովիցիոն շարժումը, վորը հարկադրեց կառավարությանը ստերեոտիպ գիջումներ անել ուղիղիցիային: Սկսվեց այսպես կոչված «բանկետային» կամպանիան, վորի ընթացքում բոլոր ղեկավարումներին լիբերալները յերկչոտությամբ և ստրկական-ամենահպատակության լեզվով հայտնում էին, յե նրանք փափագում են սահմանադրության:

«Իսկըս»-ն իր նամակում նշելով պրոլետարական կուսակցութեան տակտիկան այդ գեմատվային կամ պայտայի վերաբերյալ, ետևանում միմիկան զարգացնում և խորացնում էր այն սխալ միտքը, վորն արտահայտված էր Ստարովերի կազմած և յերկրորդ համագումարի կողմից ընդունված բանաձևի մեջ: Այդ բանաձևը խոսում էր իր սոցիալ-դեմոկրատիայի վերաբերմունքի մասին յերբրանների հանդեպ և հասունացած, որվա հարց էր համարում լիբերալ ուղղուղեցիայի հետ համաձայնութուններ կայացնելու ինդիքը:

Յեզ ան 1904 թ. նոյեմբերին, մեծ գեպքերի նախորդակին, մենչեիկները, յեղնելով հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի այն լիովին ճշմարիտ դրութունից, թե անհրաժեշտ է ոգտադործել և մերկացնել լիբերալ դեմոկրատիայի անվճուականութունն ու կիսատպոստ քաղաքականութունը, հանդում ելին սակայն ուղղորտյունիստական այնպիսի յեղրակացութեան, թե «արսուլլուտիդմի դեմ մղած պայքարի շրջանակումն հատկապես նրա ներկա փուլի մեջ, մեր վերաբերմունքը դեպի լիբերալ բուրժուազիան վորսշվում է այն խնդրով, վոր մենք պետք է նրան ավելի քաջութուն ներշնչենք և դրդենք նրան միանալ այն պահանջներին, վորը կառաջադրի սոցիալ-դեմոկրատիայի կողմից ղեկավարվու պրոլետարիատը»:

Այստեղից ել ծաղում էր մյուս ուղղորտյունիստական յեղրակացութունը, թե սոցիալ-դեմոկրատիան որհասական սխալների մեջ կընկներ, յեթե իրան նպատակ դներ սարսափեցնելու յեռանդուն միջոցներով այժմ իսկ ստիպել դեմստվորներին կամ բուրժուական ուղղորդեցիայի այլ որդաններին պանիկայի ազդեցութեան տակ

մեր պահանջները կառավարութեանը առաջադրելու ձեական խոստումը տալու:

Նամակը, ի միջի այլոց հանձնարարում է իր կազմակերպութուններին «միջոցներ ձեռք առնել, վորպեսզի մի քանի հազար բանվորների յերևալը այն շենքի մոտ, ուր խորհրդակցում են դեմստվայի ձայնավորները և մի քանի տասնյակ ու հարյուրների յերևալը շենքի ներսում, առաջ չբերի գեմատվայակալների մեջ խուճապ, վորի ազդեցութեան տակ նրանք ընդունակ լինեյին դիմելու վոստիկանների և կուլակների ստոր պաշտպանութեանը, վերածելով այդպիսով խաղաղ ցույցը խայտառակ տուր ու դմիսցի և բարբարոսական կոտորածի, յեղաթյուրելով նրա ամբողջ միտքը...»:

Նամակի վերջում «Իսկըս»-ի խմբագրութունը ուսուցանում էր բանվորներին, թե մենչեիկների հանձնարարած տակտիկան, այսինքն սոցիալ-դեմոկրատ հոտորի յելույթը՝ լիբերալ նախագահի թույլութեամբ, դա «պրոլետարիատի՝ հասարակական կյանքին պլանաչափ կերպով խոսովելու առաջին քայլն է», իսկ «ստորական, այսպես կոչված ընդհանուր դեմոկրատական տիպի» ցույցերը, այսինքն բանվորների անմիջական բաշխումը սեակցիոն ույթերի հետ—դա «ստորին տեսակի ցույցեր են»:

